41. ԹԱՔԱՎԸՐԵՆ ՊԱՑՄԱՆԸ

Մին թաքավըրը ուրան վաղիրին տասըը մանեթ փող ա տամ, ասում տար էտ փողավը ինձետե համ մին վըրեխնձար ինքյ կալ, համ մին շալ, տահանց նհետ մին շամփուր խըրաված մըես կըպիրիս, համ էլ տասըը մանեթըս ետ կըպիրիս ինձ տաս։ Էս վա̈ղիրը մնամ ա պըտըրհասու մաչ ինգյած, հինչ անըե, հինչ չանըե, լոխճինին հըրցըփորց ա անում, վըեչ մինն էլ կլո̈խ չի ինգյո̈ւմ, թա տա հինչ պեն ա, հունց կարեյի յա տասըը մընեթավ էտքան պեներն ինքյ օնըել, համ էլ փողը ետ պիրիլ։

Վաղիրը կլոխ ա յոր օնում, քյինամ սաղ երգյիրը շոռ կյամ, լոխճինին հըրցըփորց անում, վըեչ մինն էլ ա կարում չի գյիդա̈։ Մին օր էլ կլոխ եր կալած բիգի մին շեն քյինա̈լիս էտ շինացե մին մարթ ա պըտահում։ Նըհետը հնգըեր ա ինգյո̈ւմ, հղե ինո̈ւմ, քյինամ։ Հալա մին խիլլա հղե յա ինում մնացած մինչև շենը։ Վաղիրն էտ մարթին ասում ա.— Եք մինչև շենը փա̈լա̈քյա̈ն քցինքյ։ Էտ մարթը խոսում չի։ Մին խիլլա̈ յէլ վըեր քյինամ ըն, մին վարար կյետ ա կյամ ըռըշնեն։ Վա̈ղիրն ասում ա.— Եք կարմունչ քցինքյ, անց կենանք։ Տա էլլա չի խոսում, վըեններըը հանում ա, փոխկերքը եր քաշում, կյետավն անց կենում։ Վա̈ղիրն էլ վըեններըը հանում ա, փոխկերքը եր քաշում, անց կենում։ Մխըրե յէլ վըեր քյինամ ըն, մին լա̈վ, շատ հըսկըկալած արտ ա պտահում։ Վա̈ղիրը թա՝

տըեսնաս սրա տարը հնձա̈լ ա կերա՞լ, թա հնձիլա̈կան ա օտըն։ Տա էլլա չի խոսում։ Վըեր հանում ըն շենը, վա̈գիրը հըրցընում ա, թա էս շենումը հիշտե՞ղ կարելի յա ծո̈ւրո̈ւգյո̈ւնըս ղոնաղ ինգյիլ։ Էտ մարթը թա՝ հանե՛ շենին նըերքե ղոլին կալերեն տակըեն մին դա̈գյա̈ կա, քյինա̈ ընդըեղ կաց, քշերավ եր կըկենաս քյինա̈ս։ Վա̈գիրը մտկումն ասում ա հալբա̈թ էս շենումն ա̈դաթ չի ղոնաղ յոր օնըեկըր։

Հղե յա ինո̈ւմ, քյինամ էտ դիգյին տակը։ Էտ մարթը քյինամ ա ծիրանց տոն, տնըցուց քշտին նաղլ անում. թա պա իստի մին մարթ պըտտահեց, թամամ պըեկը։ Էտ մարթին մին մըեծ, շատ խըելոնք, նշանած ախճիգյ ա ինո̈ւմ։ Հըրցնում ա, թա ասպա, էտ հունց մա՞րթ ա քեզ պըտտահալ, վըեր ուզեցալ չըս քըզ նըհետ պիրիս տոն։ Հա̈րը թա՝ լավ կյեցված, քաղաքվարի, քըղաքում ապրող մարթ ա ուրված, ամմա նրա խուսկերքան խըելքըս ճուր չի խմում, խըելոնք մարթու խոսկերք չըն։ Ախճիգյը թա՝ հա̈լա̈ մին ասե՝ տըեսանամ հի՞նչ ա ասալ։ Հա̈րը թա՝ շենան խիլլա̈ հեռու տա ասեց՝ եք մինչև շենը փա̈լա̈քյա̈ն չինինքյ, քյինանք։ Ետնան էլ եկենքյ կյետեն մուտացենքյ, ասեց՝ եք կարմունջ չինինքյ, կյետավըն անց կենանք, գյո̈ւղո̈ւմ չըմ, թա տի կյետավը վըեր կարելի յա վըեները հանած անց կենալ, ծիրա̈ն կարմունջը հինչու վա՞ պետք, յա էրկու հոքավ, տերտակ ծըեռքավ հունց ա՞ կարմունջ չինում. մինգյել եկալ ընք մին լավ փսած արտու քշտավ անց կացալ, ըտըեղ էլ ասում ա՝ տըեսնաս սրա տարը հնձա̈լ ա կերա՞լ, թա հնձիլա̈՞կան ա օտըն. պա արտը հալա թամամ հըսած վուչ հունց կա՞րող ա հնձած-կերած ինի։

Ախճիգյը թա՝ ասպա, էտ մարթը շատ խըելունք մարթ ա, տու գյիդացալ չըս։ Հա̈րը թա՝ յա̈նի էտ խոսկերքը խըելունք մարթու խոսկերք ը՞ն, հունց ա՞ խըելունք։ Ախճիգյը թա՝ հա՛, շատ խըելունք խոսկերք ըն, տու չըս կյըժի ինգյա̈լ. էն վըեր ասալ ա՝ եք փա̈լա̈քյա̈ն չինինքյ փա̈լա̈քյա̈նավ քյինանք, ուզեցալ ա ասե՝ դո̈ւրո̈նց ընեըլավ քյինանքյ, վըեր հղեն ճելլի պըծնե, նղացած ինիլը գյիդանք վուչ, իսկ վըեր ասալ ա կարմունջ չինինքյ կյետավըն անց կենանք, ուզեցալ ա ասե՝ ծո̈ւրո̈ւր չիլա̈կենքյ, անց կենանք, արտան մոտե յէլ վըեր ասալ ա՝ տըեսնաս սրա տարը հնձա̈լ ա կերա՞լ, թա՞ հնձիլա̈կան ա օտըն, տրանավ էլ ուզեցալ ա ասե՝ տըեսնաս տարը պարտք ա ըրալ կերա՞լ, էտ արտան ծիրա̈ն մին պեն հանըլական ա՞, թա՝ չէ։ Մեհենգյ հըվըտացե՞ր, վըեր քըզ նհետ կըըվողը շատ խըելունք մարթ ա, դե ճելլի քյինա նըեսատա ներողութենա խնթրե, քըզ նհետ պեր տոն։

էտ մարթը եր ա կեննում, քյինամ վա̈զիրին կոշտը, նըեսաա ներողությո̈ւն խնթրում, յոր օնում քյինամ տոն։ Տանը ախճիգյը վա̈զիրին հըրցնում ա, թա սաե՝ տըսեննամ քեզ հինչ գա̈րդ ա քցա̈լ ըստեղեքյ, հա̈յրա̈թ պեն կա, վըեր եկալ ըս էս ղարիբ տըեղերը տո̈ւս եկալ։ Տա թա՝ դե էլ հինչ կյե՞ղեմ, ես թաքավըերեն վա̈զիրն ըմ, թաքավըերն ինձ տասսը մանեթ փող ա տուվալ, ասալ ա կըտաննես էտ տասսը մանեթը տաս մին վըեխճար ինքյ օնըես, նհետըրն էլ մին շալ, համին վըեխճարեն մըսան էլ մին շամփուր խըրաված մըեա պիրիս, համ էլ տասսը մանեթը ետ պիրիս. ես վա̈զիր մարթ, վըեր չգյիդացած պեն ա ինո̈ւմ, ըխշարքեն էն մին ճո̈ւնդան մարթ ա եր կեննում, կյամ կոշտըս, հըրցընում, ինձա̈նա̈ գյո̈նդո̈ւմ, քյինամ. մեհեննգյ ես շինըշեն ըմ ինգյա̈լ, օղում ըմ տըեսնամ էս պենը հու կըգյիդա, ինձ սաե։ էտ ախճիգյը թա՝ վըեչինչ, ըրխըյին կաց, տիժա̈ր չի, եռնան էլ թա՝ էքյուծ կըքյինաս տասսը մանեթը տաս բըզարան մին շատ երկան, պո̈ւրթա̈վուր, քյոք ղոշ ինքյ օնըես, պիրիս ըստըեղ, ես կասեմ, թա հինչ կաննենքյ։

Ուրո̈ւգյո̈ւնը վա̈զիրը մնամ ա ըստըեղ, քշըրհանան ճեղի քյինամ բազարը, տասսը մանեթը տամ, մին երկան պո̈ւրթա̈վուր, քյոք ղոշ ինքյ օնում, տանում։ Ախճիգյը յոր ա օնում էտ վըեխճարեն պո̈ւրթը լափ տական ծիլավ վըեր անում, կյիզում, մանում, էրկու շալ կյործում, մինը տանում տամ վա̈զիրին, թա տար տասսը մընեթավ ծախե, փողը պեր, ղոշին ծո̈ւվանքն էլ տո̈ւս տալ տամ, լուվանում, խո̈ւրդա̈ կտրում, մին շամփուր նի անում, լա̈վ խըրավում. էն մին շալեն, տասսը մընեթին ան ղոշին նհետ տամ վա̈զիրին, թա՝ դե տար տո թաքավըերեն։ Վա̈զիրը ղոշը, շալը, մըեսը, մինգյել փողը տանում ա տամ թաքավըերեն։ Թաքավըերը հըրցնում ա, թա էտ լոխ տու վը՞ս խտի ըրալ, վա̈զիրը թա՝ հա։ Թաքավըերը շատ ըստիրում ա, թա՝ դե դո̈ւզն ասե։ Վա̈զիրը թա՝ քըղանա հինչ կյե՞ղեմ, էսհինչ շեննումն խտի մին ախճիգյ կա, լոխ նա յա ըրալ։ Թաքավըերը թա՝ էս սհաթըս մարթ ղըրկեցեքյ, քյեցեքյ էն ախճիգյը պերեքյ ինձ կննգյ. էս հիշքան վախտ ա, փսակվալ չըմ, խտի մին ըխճըկան ըմ իլա̈լ շու կյա̈լիս, էս ա քթա̈լ ըմ։

Վա̈զիրը դասատին մարթ ա ղարկում, քյինամ ըն էտ ախճիգյը պիրում, թաքավըերեն նհետ փսակում։